



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 41683 գործարքներ, որոնց քանակը 2012թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.9%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 16.5%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10707 օտարման գործարքների 77.3%-ը կազմել են առուվաճառքները, 22.0%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 42.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. երկրորդ եռամսյակում, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 3.0%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 13.2%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 59.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. երկրորդ եռամսյակում, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.2%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 19.1%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երկրորդ եռամսյակ 2011թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.	առաջին եռամսյակ 2012թ.
Կենտրոն	444100	410300	400300
Արաբկիր	344000	338700	334100
Քանաքեռ-Զեյթուն	263700	265800	260300
Նոր-Նորք	225400	227900	225700
Ավան	234800	238000	234400
Էրեբունի	233900	235700	233800
Շենգավիթ	229700	234600	229500
Դավթաշեն	257200	259800	255000
Աջափնյակ	225100	227000	221200
Մալաթիա-Սեբաստիա	222000	225200	220100
Նուբարաշեն	148400	140200	140100
Միջինը Երևանում	<b>257100</b>	<b>254800</b>	<b>250400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել են 1.8%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 912 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել է 6.7 %-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 4.6%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ եռամսյակ 2011թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.	առաջին եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	130700	111400	108400
	Ապարան	49100	48600	48800
	Թալին	60700	61000	61500
Արարատ	Արտաշատ	96500	91600	90900
	Մասիս	122000	107700	106600
	Վեդի	92400	96200	96700
	Արարատ	80300	73200	71200
Արմավիր	Վաղարշապատ	142600	152500	148300
	Արմավիր	121300	117600	115400
	Մեծամոր	84300	86100	85300
Գեղարքունիք	Սևան	90600	97700	96400
	Գավառ	50100	52100	52700
	Մարտունի	89700	103200	103900
	Վարդենիս	35100	33900	32700
	Ճամբարակ	22700	21100	21600
Լոռի	Վանաձոր	91500	86300	82800
	Ստեփանավան	66800	72500	76000
	Սպիտակ	86600	99500	100400
	Ալավերդի	36000	50000	49700
	Տաշիր	41400	40700	41900
	Թումանյան	12500	11000	11500
	Շամլուղ	8000	8000	8100
	Ախթալա	18700	19500	19600
Կոտայք	Աբովյան	140600	152300	148600
	Նոր Հաճն	123000	128000	127900
	Բյուրեղավան	106900	107000	106800
	Եղվարդ	104200	108300	108300
	Հրազդան	59300	59000	57200
	Ծաղկաձոր	185300	292300	295900
	Չարենցավան	74300	83400	82500
Շիրակ	Գյումրի	106600	108300	102500
	Արթիկ	64700	64200	63700
	Մարալիկ	33500	35600	35700
Սյունիք	Գորիս	127100	114700	115500
	Կապան	104000	89100	88300
	Սիսիան	88900	79800	78700
	Մեղրի	67200	65700	67300
	Ագարակ	38200	40500	39700
	Քաջարան	67400	94100	100100
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	79100	83500	81800
	Եղեգնաձոր	108400	116200	121200
	Ջերմուկ	122900	100600	92300
Տավուշ	Դիլիջան	106300	103200	97900
	Իջևան	128600	111600	110900
	Բերդ	48000	49200	49200
	Նոյեմբերյան	39000	41300	40100
	Այրում	27300	24500	24600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել են 0.7%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1148 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 353, մարզերում միասին վերցրած՝ 795: 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն նվազել է 1.0 %-ով, ընդ որում, Երևանում աճել՝ 23.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 9.0%-ով: 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.7%-ով, ընդ որում Երևանում՝ 2.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 16.6%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երկրորդ եռամսյակ 2011թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.	առաջին եռամսյակ 2012թ.
Կենտրոն	463800	460900	459200
Արաբկիր	374300	366600	366400
Քանաքեռ Զեյթուն	275000	278000	274800
Նորք Մարաշ	280800	304500	301350
Ավան	240900	257800	249100
Էրեբունի	239100	227100	219500
Շենգավիթ	239800	243100	239300
Դավթաշեն	270500	261600	257500
Աջափնյակ	237700	237500	236400
Մալաթիա Սեբաստիա	232000	225400	219800
Նուբարաշեն	149600	144500	144700
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	<b>273000</b>	<b>273400</b>	<b>269800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 1.3% :

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ եռամսյակ 2011թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.	առաջին եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	134700	131900	130050
	Ապարան	50500	52100	52100
	Թալին	61900	68600	70000
Արարատ	Արտաշատ	104200	97900	100000
	Մասիս	125900	110700	112000
	Վեդի	95000	100000	99850
	Արարատ	82700	87100	88000
Արմավիր	Վաղարշապատ	160600	150800	145100
	Արմավիր	125000	103200	100000
Գեղարքունիք	Սևան	94500	92200	90900
	Գավառ	51200	51600	45500
	Մարտունի	90600	91100	90100
	Վարդենիս	37900	34000	34000
	Ճամբարակ	25500	25900	26000
Լոռի	Վանաձոր	100400	96100	95050
	Ստեփանավան	67300	87100	87000
	Սպիտակ	93200	112500	111300
	Ալավերդի	36700	46500	42150
	Տաշիր	45100	50100	51050
	Թումանյան	12900	12000	12500
	Շամլուղ	9300	13200	13200
	Ախթալա	19700	29400	29400
Կոտայք	Աբովյան	148100	151800	143500
	Նոր Հաճն	130900	128900	128100
	Բյուրեղավան	108700	119900	120000
	Եղվարդ	109600	114900	115000
	Հրազդան	64200	78200	77000
	Ծաղկաձոր	307200	304500	303700
	Զարենցավան	76200	81300	74500
Շիրակի	Գյումրի	117500	116300	115800
	Արթիկ	65800	61000	60000
	Մարալիկ	35900	48000	48000
Սյունիք	Գորիս	135800	126900	126900
	Կապան	106000	97900	97800
	Սիսիան	90200	88600	87800
	Մեղրի	68200	74800	74500
	Ագարակ	39400	45900	46000
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	80100	82300	82100
	Եղեգնաձոր	115700	111200	109850
	Զերնուկ	125100	120000	118700
Տավուշ	Դիլիջան	107900	104800	103100
	Իջևան	138000	119900	119900
	Բերդ	49700	57700	57850
	Նոյեմբերյան	40100	45900	46000
	Այրում	28000	34200	34500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 1.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3376 միավոր /2323.86 հա/ հողեր, որից Երևանում՝ 312 միավոր /64.48 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1738 միավոր /2126.19 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /2.08 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1175 միավոր /112.72 հա/, որից Երևանում՝ 139 միավոր /12.54 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 394 միավոր /61.70 հա/, որից Երևանում՝ 149 միավոր /47.99 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 38 միավոր /14.22 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /1.87 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 10 միավոր /4.38 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 19 միավոր /4.59 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 2 միավոր /0.07 հա/:

2012թ. երկրորդ եռամսյակում օտարված հողերից 2925 միավորի /2050.83 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 272 միավոր /61.14 հա/, նվիրատվության գործարքներ՝ 435 միավորի /272.04 հա/, որից Երևանում՝ 36 միավոր /3.26 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /1.01 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.08 հա/:

Հանրապետությունում 2012թ. երկրորդ եռամսյակում 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.1%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 17.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 18.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 908.86 հա, որից 901.30 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 17.2%-ը կամ 503 գործարքներ /274.85 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 54 միավոր /4.13 հա/, իսկ 81.9%-ը կամ 2397 միավորը /1769.88 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 212 միավոր /56.85 հա/: 2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 25 գործարք /6.10 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	0	0.00	15	1.00	39	3.14	10	1.45	11	1.87	100	10.18	91	43.34				
Արագածոտն	19	74.79	2	0.17	1	0.02	4	0.03	161	826.51	0	0.00	54	6.04	8	0.69				
Արարատ	16	55.38	3	1.45	17	1.58	8	0.29	253	170.47	3	3.99	149	12.41	7	0.11				
Արմավիր	14	12.58	2	0.20	5	0.94	3	0.09	170	138.43	1	0.04	144	16.66	8	0.28				
Գեղարքունիք	8	3.74	2	0.30	7	0.48	9	0.81	213	118.93	0	0.00	48	5.69	4	0.88				
Լոռի	1	0.03	3	0.05	10	1.06	25	1.16	132	164.58	0	0.00	48	5.89	20	0.41				
Կոտայք	33	67.02	2	2.26	114	9.23	22	0.59	228	86.23	2	2.43	238	21.46	20	1.50				
Շիրակ	1	1.53	0	0.00	12	0.45	27	1.23	34	30.99	0	0.00	18	1.39	6	0.11				
Սյունիք	6	16.86	2	0.23	5	0.27	3	0.21	68	51.23	0	0.00	12	1.71	5	0.24				
Վայոց Ձոր	6	7.74	1	0.002	1	0.03	7	0.15	32	14.91	0	0.00	13	1.32	5	0.07				
Տավուշ	4	3.20	3	0.23	11	0.95	19	1.26	40	22.03	0	0.00	24	2.14	3	0.02				
Ընդամենը	108	242.87	20	4.89	198	16.01	166	8.96	1341	1625.76	17	8.33	848	84.89	177	47.65				

Ստորև ներկայացվում է 2012թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը				Բնակավայրերի հողեր				Ընդամենը				Գյուղ. նշանակության հողերի				Գյուղ. նշանակության հողերի			
					Բնակելի կառուցապատ. /տնամերձ / հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի					
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	40	2.78	0	0.00	10	0.62	30	2.16	14	1.36	0	0.00	0	0.00	5	0.38	9	0.98		
Արագածոտն	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	24	75.00	19	74.79	2	0.17	1	0.02	2	0.02		
Արարատ	1	0.02	1	0.02	0	0.00	0	0.00	43	58.68	16	55.38	2	1.43	17	1.58	8	0.29		
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	12.81	13	11.58	2	0.20	5	0.94	3	0.09		
Գեղարքունիք	1	0.03	0	0.00	0	0.00	1	0.03	25	5.30	8	3.74	2	0.30	7	0.48	8	0.78		
Լոռի	5	0.03	0	0.00	0	0.00	5	0.03	34	2.27	1	0.03	3	0.05	10	1.06	20	1.13		
Կոտայք	8	0.35	0	0.00	6	0.33	2	0.02	157	62.30	27	50.58	2	2.26	108	8.90	20	0.56		
Շիրակ	12	0.96	0	0.00	5	0.17	7	0.79	28	2.24	1	1.53	0	0.00	7	0.27	20	0.44		
Սյունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	14	14.54	5	13.83	2	0.23	5	0.27	2	0.21		
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	7.92	6	7.74	1	0.002	1	0.03	7	0.15		
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	37	5.64	4	3.20	3	0.23	11	0.95	19	1.26		
Ընդամենը	70	4.18	1	0.02	21	1.12	48	3.04	414	248.06	100	222.40	19	4.87	177	14.88	118	5.91		

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 8 գործարք /20.47 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. երկրորդ եռամսյակում, 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 37.9%-ով Ընդ որում, Երևանում աճել է 14-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 40.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 39.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 28.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 48.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 26.7%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	16	59.80	27.0	512.3	166.1	95	77.65	365.0	12000.0	3937.0
Ապարան						12	9.34	86.5	2727.3	693.0
Թալին	3	14.99	37.7	156.0	93.1	43	719.83	93.6	5494.5	600.3
Ծաղկահովիտ						11	19.69	79.5	1000.0	236.2
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	5	6.50	72.3	8505.1	5089.8	111	35.34	335.1	10833.3	2733.9
Մասիս	5	5.65	84.1	507.5	171.4	58	86.68	200.0	11904.8	3047.8
Վեդի	6	43.23	63.5	528.0	195.7	82	48.06	207.0	10795.1	1809.6
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	9	7.78	529.6	1059.2	998.4	91	57.19	294.3	9090.0	1572.9
Բաղրամյան	2	3.37	70.0	1595.0	832.9	19	50.27	90.6	2561.1	730.3
Վաղարշապատ	2	0.43	479.6	2013.1	1246.4	58	30.36	444.4	11764.7	2735.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						173	63.20	199.8	1875.0	396.7
Ճամբարակ						7	6.47	60.5	953.3	332.1
Մարտունի						14	3.74	51.1	2850.0	726.5
Սևան	8	3.74	400.0	400.0	400.0	1	2.40	52.2	2134.8	315.3
Վարդենիս						18	43.12	41.2	2575.1	377.7
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						4	1.70	170.4	6424.2	670.7
Գուգարք						12	2.06	234.6	6065.9	753.6
Սպիտակ						4	4.91	250.0	5555.5	728.1
Ստեփանավան	1	0.03	1325.1	1325.1	1325.1	18	18.70	90.6	1686.6	296.1
Տաշիր						87	125.48	45.3	1384.4	141.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	11	31.37	17.4	1297.1	339.4	87	28.86	279.3	11942.7	4690.2



Եղվարդ	10	11.53	111.4	1308.5	898.2	101	38.65	174.4	11971.8	2815.1
Հրազդան	6	7.68	338.6	868.8	672.7	35	17.61	130.5	10256.4	1906.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.53	336.0	336.0	336.0	13	16.26	252.0	1693.1	580.9
Ամասիա						2	2.18	40.9	261.0	128.5
Անի						7	6.14	110.6	546.9	370.0
Աշոցք						1	1.07	58.5	215.8	121.5
Արթիկ						11	5.34	79.4	1428.6	378.4
Սյունիքի մարզ										
Գորիս						20	18.77	92.6	1023.2	691.0
Կապան	2	7.28	107.4	585.8	346.6	13	6.79	120.0	841.6	338.8
Մեղրի						10	2.58	193.0	3000.0	724.1
Սիսիան	3	6.55	75.0	135.0	115.0	25	23.09	46.3	1977.4	497.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	0.39	203.0	634.4	418.7	20	10.08	125.0	10000.0	1865.5
Վայք	4	7.35	107.8	110.0	108.9	12	4.83	58.8	1430.7	601.7
Տավուշի մարզ										
Բերդ						4	0.50	213.3	3783.8	672.5
Իջևան	4	3.20	154.0	608.2	494.4	14	11.05	267.5	9454.5	1229.6
Նոյեմբերյան						22	10.49	46.7	7368.4	838.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դասարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Ստավի ազույն	Միջին			Նվազագույն	Ստավի ազույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						40	36822.0	130.7	22200.0	2571.8
Ապարան						8	11055.0	124.1	609.6	365.6
Թային	1	235.0	90.0	90.0	90.0	6	12550.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.3
Արարատի մարզ										
Արտաշատ	16	15409.4	269.0	850.6	672.4	36	35687.6	173.9	7140.3	892.7
Մասիս	1	400.0	1989.0	1989.0	1989.0	72	48418.0	187.5	25000.0	1212.1
Վեդի						41	40040.4	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	952.0	356.3	3463.6	1910.0	41	53580.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	233.1
Վաղարշապատ	3	8405.0	48.0	6020.5	2042.0	100	106840.0	197.4	26528.4	1526.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2000.0	110.0	110.0	110.0	9	10207.0	186.6	1084.3	661.5
Ճամբարակ						1	2400.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	2	1614.0	119.1	219.8	169.5	31	31760.6	119.3	5000.0	279.0
Սևան	3	1233.3	118.5	484.5	356.5	2	2620.0	240.0	3110.4	304.9
Վարդենիս						5	9931.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										

Ալավերդի	1	16.1	954.5	954.5	954.5	4	2903.0	114.3	1388.9	216.0
Գուգարք	1	242.0	1949.0	1949.0	1949.0	25	26012.9	77.9	14083.3	1074.0
Սպիտակ	3	3895.0	115.2	607.5	245.4	14	24330.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան	3	875.0	553.7	554.4	554.2	4	5022.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	2	5601.0	148.3	297.5	222.9	1	600.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	24	21698.4	323.0	5216.7	2275.3	112	97196.2	264.5	35353.5	1962.1
Եղվարդ	81	65159.1	645.2	3825.5	3163.8	109	101929.7	173.6	27000.0	2845.7
Հրազդան	3	2180.0	818.3	4750.0	2784.2	15	14446.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	2720.4	554.4	6666.7	2342.4	11	7848.4	113.6	18750.0	331.3
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						3	2878.2	67.9	180.6	159.3
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						4	3210.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	891.0	891.0	891.0	6	10264.0	112.2	1700.0	371.1
Կապան	4	2139.0	434.9	978.5	819.1	3	3165.0	67.9	2638.9	297.4
Մեղրի						1	496.0	68.5	632.9	190.0
Սիսիան						2	3210.0	123.5	875.0	195.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	273.0	245.4	245.4	245.4	9	9655.0	96.7	7659.6	499.5
Վայք						4	3552.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	2283.0	75.8	810.0	110.5
Իջևան	4	3591.5	151.2	3000.0	1577.4	18	14578.0	74.1	14423.1	516.6
Նոյեմբերյան	7	5892.0	76.4	1100.0	234.2	4	4530.0	125.0	1948.1	221.0

2012թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2076 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.0%:

2012թ. երկրորդ եռամսյակում, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 4.4%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 9.9%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 133 բնակարանների, 190 անհատական բնակելի տների, 950 հասարակական նշանակության, 206 արտադրական նշանակության օբյեկտների, 513 միավոր /1285.99 հա/ հողերի, 6 այգետնակների և 78 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 60 վարձակալության գործարքների, այդ թվում 15 միավոր /1.01 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 42.3%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 76.5%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1285.99 հա հողերից 5.37 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1280.62 հա հողերից 301.69 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 13.54 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 492.98 հա, որից 240.09 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. երկրորդ եռամսյակում

հանրապետության մարզերում վարձակալվել են 917.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6033 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է 46.7%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 18.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.9%/, առանձնատների /23.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /8.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2194 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 44.9%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 2.7%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 3343.94 հա հողեր, որից 87.87 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.2%-ը կամ 3216.82 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 3.98 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2832.27 հա, որից 2812.35 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 450 գործարքներ, որից 265-ը՝ Երևանում: 2012թ. առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 5.1 անգամ, ընդ որում Երևանում՝ 4.3 անգամ, մարզերում միասին վերցրած՝ 6.6 անգամ, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 29.5%-ով, ընդ որում Երևանում՝ 43.7%-ով, մարզերում միասին վերցրած աճել՝ 10.8%-ով:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5141 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2012թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 62.3%-ով, իսկ 2011թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 39.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.6%/:

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**